Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿԱՐԵՆ ՂԱՐԻԲՅԱՆԻ Ք. ԻՐԿՈՒՏՍԿ (ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը. Կարեն Ղարիբյան

2. Զբաղեցրած պաշտոնը. ՀՀ գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները. Ռուսաստանի Դաշնություն, ք. Իրկուտսկ, 19-22 հուլիսի, 2023 թվական

4. Հրավիրող կողմը. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջև համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). Մասնակցություն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջև համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովի 37-րդ հերթական նիստին:

6. Քննարկված թեմաները.

- Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև գիտակրթական համագործակցությունը և ժամանակակից տեխնոլոգիաներն ու զարգացման միտումները,
- միջտարածաշրջանային միջբուհական համագործակցության և կրթական համագործակցության ընդլայնումը ինժեներատեխնիկական մասնագետների և բուհերի այլ շրջանավարտների պատրաստման գործում,
- Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության դաշնային ու տարածաշրջանային բժշկական հաստատությունների ու համալսարանների մասնակցությամբ նոր կրթական բժշկական ծրագրերի ստեղծման, ինչպես նաև առողջապահական համակարգի թվայնացման ոլորտներում գիտատեխնիկական համագործակցության ընդլայնումը,
- բարձրագույն կրթության բնագավառի զարգացմանն և ինժեներատեխնիկական մասնագետների որակավորման բարձրացմանն ուղղված կրթական համագործակցության նոր ձևաչափերի ստեղծումը,

- Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի միջև աշխատանքային խմբի ստեղծումը՝ համատեղ գիտակրթական նախագծերի իրականացման նպատակով,
- գյուղատնտեսական գիտությունների բնագավառի երիտասարդ գիտնականների հայ-ռուսական համատեղ համաժողովի կազմակերպումը,
- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջև համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովի 38-րդ նիստի անցկացման թեման, ժամկետները և վայրը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում մասնակցել եմ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջև համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովի 37-րդ հերթական նիստին, որի շրջանակներում քննարկվել են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև գիտակրթական համագործակցությունը և վերջինիս զարգացման միտումները, ինժեներատեխնիկական մասնագետների և բուհերի այլ շրջանավարտների պատրաստման գործում միջտարածաշրջանային միջբուհական համագործակցության և կրթական համագործակցության ընդլայնման հարցը, Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի միջև համատեղ գիտակրթական նախագծերի իրականացման նպատակով աշխատանքային խմբի ստեղծման, ինչպես նաև բարձրագույն կրթության բնագավառի զարգացմանն և ինժեներատեխնիկական մասնագետների որակավորման բարձրացմանն ուղղված կրթական համագործակցության նոր ձևաչափերի ստեղծման հարցերը:

ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահի տեղակալ Յուրի Վորոբյովը իր ելույթում կարևորել է հայ և ռուս ժողովուրդների բազմադարյա պատմության ընթացքում ձեւավորված բարեկամությունը, Սփյուռքի դերակատարումը հայ-ռուսական միջպետական համագործակցության շրջանակներում:

Այցի շրջանակներում հանդիպում է տեղի ունեցել նաև Իրկուտսկ երկրամասի ղեկավար՝ Իգոր Կոբզևի և Իրկուտսկի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ընդլայնել Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության հետ գիտության և կրթության ոլորտներում միջտարածաշրջանային համագործակցության պայմանագրաիրավական հիմքը, ընդլայնել Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության դաշնային ու տարածաշրջանային բժշկական հաստատությունների ու համալսարանների մասնակցությամբ նոր կրթական բժշկական ծրագրերի ստեղծման, ինչպես նաև առողջապահական համակարգի թվայնացման ոլորտներում գիտատեխնիկական համագործակցությունը, դիտարկել Հայաստանի Հանրապետությունում ինժեներային լաբորատորիաների բացման հնարավորությունը, ստեղծել բարձրագույն կրթության բնագավառի զարգացմանն և ինժեներատեխնիկական մասնագետների որակավորման բարձրացմանն ուղղված կրթական համագործակցության նոր ձևաչափեր:

Նիստի ավարտին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի և Ռուսաստանի Դաշնության Իրկուտսկի երկրամասի, Արմավիր և Իրկուտսկ քաղաքների միջև ստորագրվել են համագործակցության հուշագրեր:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կադրային և տեխնոլոգիական ներուժի զարգացման, տեխնոլոգիական ինքնիշխանության ապահովման, ինչպես նաև համատեղ գիտակրթական նախագծերի իրականացման նպատակով Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի միջև ստեղծել աշխատանքային խումբ: Երաշխավորել երկու երկրների օրենսդիր իշխանության մարմիններին շարունակել բարձրագույն կրթությանն և ինժեներատեխնիկական մասնագետների որակավորման բարձրացմանն ուղղված համագործակցության նոր ձևաչափերի ստեղծումը: Ձեռք է բերվել համաձայնություն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջև համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովի 38-րդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետությունում: